

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարիտ	համար
արևիկա	12 ֆր.
վեցսուսայ	7 "
Արևմտահայաստանի	
համար սարկուս	15 ֆր.
վեցսուսայ	8 "
Արևելահայաստանի	
համար սար կան	3 ֆր.
վեցսուսայ	1.50 "

Մանուգրան սուրբ և սուրբ 40 սանթիմետր իսկ վերջին երեսուն համար 20 սանթիմետր է, հրեհին և էյի անգամներու համար 20 0/0 զեղը կրայի:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմետր է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՇՄԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՎ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Վառնայի և Գրանայի խմբագրության և անցիկին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պաշխարիտի համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արևմտահայաստանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրությունների և սուրբ

ՇՈՒԹՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԲԱՇՄԱԿԱՆԸ ՊԵՏՔ ԵՎ ԿԱՆԵՒԻՎ ՎՃԱՐԵ

Ա Յ Ա Բ Ա Ղ Դ Ը

Կը ծանուցանեմ յարգոյ հասարակութեան թէ՛ Սօփիա քաղաքի Ա. վիճակահանութեան, Բ. կարգի ամենամեծ շահեստը ֆր. 20,000 ոսկի շահած է թիւ 32661 սոմսուկը, ծախուած գլխաւոր գործակալու թեանս ձեռքով, քաղաքիս մէջ. Այդ քաղաք վաճառեց հայ օրիորդ մը:

Բազմը կոյր է, չգիտցուի թէ երբ կը ժպտի. ամէն պարագայի մէջ խելացիութիւն է բազմը փորձել՝ այն ալ զլխաւոր գործակալութեանս հայթայթած տոմսերով, թէ ո՛վ չունի, լաւ է որ ձեռք տայ բազմին:

ՍՈՐԳՈՍ ԳԱՐԻԻԷԼԻԱՆ

Գլխաւոր գործակալ Սօփիա քաղաքի վիճակահանութեան, երաշխաւորեալ իշխանական կոմիտէի թեան

Ք Ա Ղ Ս Ք Ա Ն Ա Ն Ո Ւ Թ Ն Ա Ն Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ը

—(օ)—

Քաղաքականութիւնը, որուն զլխաւոր դերակատարը գիտնազիտութիւնն է, ազգ մը կառավարելու և անոր տարբեր գերութեան ունեցած յարաբերութիւնները իրեն ամենէն շահատուր ճամբով վարելու արուեստն է: Քաղաքականութիւնը իր բոլոր քայլերուն մէջ ինկատի ունի յոկ շահը, գրական, շոշափելի շահը, թէեւ այդ իսկական նպատակակէտը կը պարտկուի գրեթէ միշտ բարոյականութեան ամենէն փայլուն ու շողողուն բաւերովը. Ազգ, յառաջդիմութիւն, ժողովրդական շահ են, յառաջ կը քշուին քաղաքագէտներու կողմէ հոն՝ ուր իրապէս ազգը ոչ մէկ շահ չունի ու գուցէ կը զլխաւոր նոյնիսկ, ուր միմիայն ազգին արիւնքը ծրծող յայտնի դասակարգեր որ կօզտուին: Ընթացիկ խոսքը լիակաւ աշխարհի վրայ բան մը որ այնքան անխղճօրէն ու շնականօրէն ծաղրէ բարոյականը, որքան այս քաղաքականութիւնը ըսուած հրէջը:

Ասիկա գիտնալով, որքան միամիտ ու տգէտ ազգ մը ըլլալու ենք մենք, երբ դեռ ոգեւորութիւնը վանազան առիթներու մէջ սակամ նա քաղաքագէտին յայտնած նպատակներ կամ ան նպատակարար թելն ու շարհա-

մարհենք զայն նոյնիսկ, մեր համոզմանց ու մտադրութեանց ազաւինած, որոնցմէ կէտ մը իսկ պէտք չէր շեղելիք ոչ մէկ պարագայի մէջ: Քաղաքագէտը աշխարհի ամենէն, անխիղճ, պարտաւոր ու անբարոյական արարածն է իր հանրային կեանքին մէջ. կը ստէ, կը խաբէ, կը կեղծէ, պարագային համեմատ, առանց նկատի առնելու իր բնութագրէն երկրորդի մը ըլլալիք զիտաւր, Ահա ամբողջական պատկեր մը քաղաքագէտի բարոյականին, զոր եւրոպացի նշանաւոր գրող մը գծած է, վերջերս իտալական դահլիճին անկման առթիւ:

«Ընթացիկ քաղաքագէտը իր գործունէութեան մէջ չի կրնար հետեւիլ անհատական բարոյականին խիստ ու յստակ կանոններուն: Քաղաքականութիւնը ինքնին սոփիզմաբար անբարոյական բան մըն է:

«Երբ ժողովուրդ մը կը կառավարենք, չենք կրնար մեր ընթացքը գծել ընտանեկան համեստ կեանքին պարզագոյն օրէնքներուն համեմատ: Ներքին գործոց նախարար մը պէտք է մամուլը կաշառէ, ընտրութեանց միջոցին իր թեկնածուներու յիթանակը ապահովելու համար կողմնակցութեան ու կաշառատութեան փորձեր ընէ: Արտաքին գործոց նախարար մը պէտք է Կիտնայ հարկեղած տեղը սուտ խոսելու, և պետք եղած

ատեն խաբելու: Դիւանագիտութիւնը միթէ ազնուապետական ու միջազգային կեղծիքի ու խաբէութեան գարոցը չէ՞: Երկու տեսակ բարոյական կայ, ինչպէս կըսէր Միռապօ, փոքր բարոյական և մեծ բարոյական: Առաջինը, կրօնքին պէս, ալքատներուն, խոնարհներուն, սղէտներուն օգտակար է, երկրորդը սեփականութիւնն է մեծ մարդոց, և կամ ինքզինքնին մեծ մարդկարծողներուն, որովհետեւ քաղաքագէտներ են:

«Ստեղ և կաշառել գէշ բաներ են անհատական կեանքի մէջ բայց քաղաքական կեանքի մէջ ընդհանուր կանոնն է:

«Մարդ մը որ իր հանդերձատան մէջ չունի մեծ բարոյականի զգեստը փոքր բարոյականի վերաբերելիքը, մարդ մը որ սովորութիւն չունի իր գաղափարներն ու զգացումները փոխելու, բոտ որում պարզ քաղաքացի կըլլայ կամ նախարարաց խորհուրդի մը նախագահ, մարդ մը որ պատրանքը կամ միամտութիւնն ունի կառավարական աթոռին վրայ բերելու այն պարկեշտութիւնը զոր իր սոսկական կեանքին մէջ ունի, այդ տեսակ մարդ մը կրնայ իր երկրին կառավարութեան զուրքը քանի մը ամիս մնալ, բայց ոչ աւելի, քանի որ չունի անհրաժեշտ եղող այն պակասութիւնները որոնք պիտի կրնան իր գիրքը պահպանելու:

Այս յստակ ու ճշգրիտ պատկերը կատարեալ քաղաքագէտը կրնայ տալ մեզի աշխարհի քաղաքագէտներու մասին: Մենք առհասարակ կողեւորութիւնք երբ հայոց համար ու է առթիւ նպատակարար կարծիք յայտնող եւրոպացի մը օր մը նախարար կըլլայ: Զի մոռնանք սակայն որ, իբր պարզ մահկանացու, անոր յայտնած համակրութիւնը, եթէ չի գաղտնի, գէթ կը շեղուանայ, անգործութեան կը մատնուի, երբ նախարարական աթոռը բազ-

մի ան: Հռչակաւոր Բլէմանսօ, Պրանսայի արդի ներքին գործոց նախարարը, ամենակատարի հակառակորդ մըն էր ֆրանքո-ուս դաշնակցութեան, և հազար անգամ, իրեն յատուկ կորովի շեշտովը պահանջած է հրաժարիլ այդ դաշնակցութեանէն, որ միայն Պրանսայէ՛ միւլիառներ քաշելու համար հիմնուած էր: Բայց, այդ միւլիառներու ամենէն անարգ փոխառութիւնը իր նախարարութեան օրովը էր որ և դաւ. և Բլէմանսօ, որ երբեմն փրփուրը բերին կըրակ կը ժայթքէր Պրանսայի միւլիառները այդ սպիտակ գազանին կոկորդը թափուներուն վրայ, այս անգամ, սահպուած էր ձայն իսկ չի բարձրացնել: Ահա քաղաքական բարոյականը, ամենէն բարոյական կարծուած քաղաքագէտին քով: Ինչ արդարացումներ ալ մէջ բերուին, այս իրողութիւնը իբր փաստ կը մնայ Բլէմանսօի քաղաքական կեանքին մէջ:

Այսպէս ուրեմն, օրէ օր, աւելի ևս կը պարզուի թէ հայաստաններու քաղաքականապէս ազգեցիկ կամ տկար ըլլալը ու է լուրջ օգտակարութիւն մը չի կրնար ունենալ մեզի համար: Մենք ալ մինչեւ որ այս ճշմարտութիւնը մեր մտքին մէջ չի քանդակենք, չենք կրնար ամուր ինքնավստահութեամբ պատրաստուիլ ու մեր ճամբան մեր ձեռքերով բանալ: Երբէք աչքերնուս մէկը ետին պէտք չէ ըլլայ, դիտելու որ արգեօք օգնող պիտի ըլլայ մեզի: Ոչ ոք մեզի չօգնէր, մենք մեզի միայն օգնենք:

ՇՈՒՄ

ՄԻ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՒՆ

ԳԵՆԵՐԱԼ ՆԱԶԱՆԳԱՊԵՏԸ

Պ. «ԴԱՇՆԱԿՏԱԿԱՆ»

Աստուած հոգին լուսաւորէ Մեքոպ

Մաշտոցի և Գուտնիսի գրքերի, որոնց առաջինը հայերի համար գրելը հնչ-տադրոցի, իր տառերի գիշտով, իսկ երկրորդը իր հնարած մամուլի միջոցով մաքուր տարածելը, այլապէս մեր «Գաղափարական» հնարաւորութիւն չէր ունենայ այնքան տառակերպով հայտնելու, մինչեւ իսկ մատնիչ առեւանդելու որք նա այսօր հնչաւ թեմամբ անուամբ է շնորհիւ վերոյիշեալ հնչադրոցի միջոցներով:

Գինեքաղնահանգապետը որպէս իսկական բիւրոկրատ, իր ձեռքի ասկեղած բոլոր ոյժը գործ է գնում, որպէսզի գործի կատարած «քաջագործութիւնները» հրապարակ չհանեն և Մանջուրիայի այդ «հերոս»-գործը սխաղաղացնում է» երկիրը...

—Վա՛յ է, եթէ մէկը համարձակ լեց այդ մասին մի չնչին բան յիշելու մեր գինեքաղնի խիստ պատժելի գիտնէ, և մենք սեննում ենք, թէ ինչպէս մէկը միտի յետեւից սուսկի նման բուսնող թելթելը արագ կերպով մեռնում են... գինեքաղնի մի հրամանով, եւ այդ ամենը այն պարզ նը պատակով, որ զօրքի սխաղագործութիւնները հասարակութեան աչքից դաւանի մնան:

Նոյնը պարզապէս չկատուում է այն կազմակերպութեան կողմից, որ կաշուում է Հայ Յեղ. Դաշնակցութիւն:

Որ այդ «կուսակցութեան» գինը վերջին թուրք-հայկական դժբախտ ղեկավարի ժամանակ բարձրացաւ, որի մասին փառաւոր կերպով ձայնում էր Փոխարքայի պալատում մի սիսկական քուրճուակ, Ա. Պատրիսեան, — դա հասկանալի է:

Սակայն պարզ է և այն, որ այսօր նա իրան հայութեան լիակատար տէր հրաւարակելով, սակայն է և իր մտածելու, դատելու եղանակը, ու վա՛յ նրան, ով այդ ամենի հակառակը կը մտածէ այդպիսին կախաղանի սրժանի մի մարդ է, «պզի դաւաճան» է...

Այդ ոչ թէ արտասահման ուսումնասիրտանների համոզմունքն է, այլ և այն խեղճերի, որոնց չազգասիրու-

թիւնը՝ թշնամուսն սպանելու պիտի չի անցնում:

Այն, ինչ որ կատարում է մեր գաւառներում և գիւղերում, միայն կոյրերը չեն նկատի եւ երբ մէկը վարագործի ծայրը բարձրացնում է և նրա տակ կատարող երեւոյթներով մի հարիւրորդական մասը երեւան հանում, խիտն «Գաղափարական» գինեքաղնի փոխանակ պատասխանելու, ազդակում են, որ դա մատուցութիւն է և հրամայում են, յոն՛չ իայց դստնանք հարցին:

Ճշմարտութեան անունից խօսող «Այլքը», սպիտակ Ազուրիսի եւ նման «հերքումները» — մի՞թէ ուղղակի կերպով չի հովանաւորում այն պարունակներն, որոնք ծանրացած ժողովրդի վրայ ճշում ու տանջում են նրան Սրբ և իցէ բարեհաճել էք պարունակ, հրապարակ հանել այդ «հերքումներ» արածները, նրանց բացասական կողմերի թէկուզ հէց մի հարիւրորդական մասը:

Մի՞թէ գաւառներից ստացւած լուրերը, այնտեղ կատարող սարսափները չեն առում ձեզ պարունակներ, թէ մեր կուսակցականութեանը ժողովրդին վայելանքնում է, տանում է նրան ղեկի բարոյական անկուսի, Մի՞թէ մի ներքին ձայն ձեզ չի առում, «ձեռք վերցրէք պարունակներ, դուք շնորհք չունէք նրան դատարան կեցում»:

Վե՛հ, հրամայում էք դուք, լըռե՛նք, որովհետեւ գրելը սպառնալից է, «մատնութիւն է», «մատնութիւն է»... Մի՞թէ գինեքաղնահանգապետի արձակուրդը հրամանը կարողացաւ ծածկել այն, ինչ որ կատարում էր, և կատարում է — որ երեկով — բիւրոկրատիայի ձեռքով, թէ՛ դուք կարծում էք, պարունակներ, որ մարդու վերայի վերքը մի լաթի կտորով ծածկելով, կարելի է բուժել նրան...

Բանի որ դուք մեր հրամաններով և մեր բերած ու կոպտ ուժով հրապարակ կը գաք բողոքի և արդարութեան ձայնը խեղճելու, քանի որ դուք փոխանակ մերկացնելու մեր սկերտներին քաջագործութիւնները,

կաշխատէք, մեր բարձր ոյժերով հովանաւորել ու խրատուել նրանց, դուք կը լինէք ոչ թէ ժողովրդի բարեկամները, այլ նրա ամենամատանգաւոր թշնամիները: Եւ ամեն մի յեղափոխական իր սրբազան պարտքը կհամարէ չնայած մեր բոլոր հայնոյանքներին ու սպառնալիքներին, բողոքե՛լ մեր արարքներին դէժ պատուե՛լ մեր «յեղափոխական» գիտակցութիւնը:

Ն Ա Մ Ա Կ Թ Ա Ի Ի Զ Ի 3

Թուրիդ, 2 մայիս.

Երկու օր սրանից առաջ, այստեղ տեղի ունեցաւ մի մարդասպանութիւն, որը իր վարագործութեամբ լուրից և զայրոյթով համակեց ամբողջ ազգաբնակչութիւնը: Զոհը մի Հնչակեան էր Մհեր անունով որը սրանից մի քանի ժամանակ առաջ ձեռնադրուելով Պատու անունով մի դաշնակցականի, երթարկել էր բանտարկութեան պատժին, Հնչակեան կազմակերպութեան կողմից, բայց այդ վճիռից դժգոյ՛ դաշնակց տեղական կոմիտէն վճռել էր տեղորէ երթարկել յիշեալ Մհերին, եւ տեղորէ կատարելից օրը ցերեկով տանախառնակ ձեռքով, թշնառ զոհը ընկաւ 33 գընդակի և զաշոյնի հարւածներից, իսկ խուլիզան ոճրագործ տեղորիւները ամենայն բարբարոսութեամբ, զի կրանպատելուց յետոյ, կողոպտեցին նրան, տանելով ժամացոյցը ատրճառանակը, 3 թուամս փող, նոյն իսկ գլխարկն ու դաշոյնը:

Ոտիկանները դարով սպանութեան վայրը, հանդիսատես եղան խոնկած ժողովրդի լացին, ճին, զայրոյթին ու զզուանքին եւ ի՛նչա՛րով բանի էութիւնը հետաքննելու, առանց հետապնդելու եղանակի հեղինակներին:

Ուրբաթ օրը տեղի ունեցաւ դուր հանդիսաւոր թաղումը խուռն բազմութեան ներկայութեամբ, Հնչակեանների կողմից, 7 պսակ էր դրւած

դազադի վրայ և պ. Ա. ի դարձանակաւոր յուզեց ու լացացրեց ամբողջ հասարակութեանը:

Ժողովրդի ցանու մի խիստ բուռն է ղեկի ոճրի հեղինակները մասնաւորապէս և ղեկի հայ ազգապետ կուսակցութիւններն ընդհանրապէս որոնք իրանց այլատեսմամբ անբարոյականացնում են մեր միջավայրը: Այժմ Թաւրիզում որոշել են բոյկոտի երթարկել այդ կուսակցութիւններին, եւ չյաճատել նրանց ներկայացումներին, դատախոսութիւններին եւ այլն եւ այլն:

Թշնառ հայ ժողովուրդ, մինչեւ ե՞րբ ստիպուէ պիտի տանես, այդ «ազգային» կոչւած կուսակցութիւնները կամայականութեամբ լուծու, մինչեւ ե՞րբ ականատես պիտի լինես այդ կուսակցական ոճիրներին ու արեան... եւ մինչեւ ե՞րբ պիտի թոյլ տաս յանուն «քո շահերին» շահագործել քեզ...
Ի/ս

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

«Թայմս» Անգլիական լրագրիչը, Տուրմաի անցեալ մայիս 13ի նիստը պատմական կը նկատէ, իսկ կատարողութեան յայտարարութիւնը — անիմաստ և շարամիտ:

Ազգային ներկայացուցիչները, կը գրէ «Թայմս» միահոգի պահանջեցին նախարարութեան պաշտօնէ հեռանալու կառավարութեան յայտարարած կռիւը Տուրմաի կընդունելու, և Յուշիմայի ծովամարտին առաջին տարեդար ձիւ՛ կռիւը կը սկսի Տուրմաի և կառավարութեան միջեւ, Ելն մտակցութեան պարտաւճանի մէջ կը քուտը նոր փոխառութեան շնորհիւ անհնարացած է, իսկ այս փոխառութիւնը կարելի

ՀԵՆՐԻ ՏԸ ՔԼԱՅՍ

Ը Ն Կ Ե Ց Ի Կ Ի

(Շար. Անիս. քիւն)

Տարի մը անցաւ, Բոսթանս, Նիքոլի կինը ծննդաբերութեան ատեն մեռաւ նորածինին հետ, ինքնին այնքան ցաւալի այս ղեկավարը, քանի որ առաջինի եւ բարեկիրթ կին մը կը կուտուէր այլ աւելի դառն էր, այն պատճառով որ, առողջ Նիքոլի առջեւ կը բացուէին իր երկու ձիւրքերուն մեծ ու փոքրիկ դուռները, այսինքն կրօնքի պաշտամոլութիւնը եւ կիրեւոր բուռն հակումը, Դայնիսի սկսաւ ամբողջ օրեր փանականներու խցիկներուն մէջ անցնել, իր ցաւին մխիթարութիւն գտնելու պատրուակին տակ, սակայն ամէն ոք գիտէր արդէն թէ իր կնոջ կենդանութեան իսկ շատ սղոմելի սէր ու հաւատարմութիւն մը ցոյց տուած էր անոր հանդէպ: Դեռ Բոսթանսի մարմինը հողը դրոուած չէր, երբ Ելվեր, իր կուսան, թաղման հանդէպին մանրամասնու-

թեանց մասին խօսելու համար Նիքոլի սենեակը մտնելով, անոր քով տեսաւ կարծ զգեստներ հագած աղջիկ մը, սնդուրուած, որ Բոսթանսի Ելվերի, հենկապանուհին էր: Այս տեսարանին առջեւ, պարկեշտ կինը այքերը խոնարհեցուց, առանց բառ մը արտասանելու ետին գարձաւ ու սենեակէն դուրս ելաւ: Ոչ Փիւշի եւ ոչ ալ Ելվերը ու եւ է մէկը այս եղիւթիւնը լսեց, Ելվեր, սիրտը լեցուած, գոհացաւ Բոսթանսի մարմնու առջեւ ծնրագիր արտասուելով, այդ կնոջ՝ որ այնքան Չերմագին սիրած էր իր ամուսինը: Բայց, դիպուածաւ, Փիւշի, որ քողաք իջած էր, տանը դուռնէն ներս մտաւ ճիշտ այն միջոցին երբ այդ նախնա աղջիկը դուրս կելլէր: Գուշակեց ինչ որ տեղի ունեցած էր, խստիւ մոտեցաւ անոր, կէս մը խորամանկութեամբ, կէս մը բռնի, ձեռքէն առաւ նաձակ մը զոր կը տանէր Յետոյի սենեակը քաշուեցաւ զայն կարգաւ, ու պարունակութիւնը գտաւ ճիշտ այն՝ ինչ որ մտքէն անցած էր, այսինքն պաշտառքին խնդրանք մը Նիքոլի կողմէ Բոսթանսի, որոշելու համար տեսակցութեան մը ժամն ու վայրը:

Փիւշի կեղծուած գիրով մը պատասխանեց Բոսթանսի անուամբ Ելվեր սօր իսկ, գիշերէն առաջ, ս. Մագթաղինէ եկեղեցուն մէջ, նստակոր անձանթ կնիքով մը կնքեց ու զայն Նիքոլիին զրկեց իբր թէ կնոջ կողմէ եկածի պէս, Հնարքը սքանչելի կերպով յաջողեցաւ, Նիքոլի իսկոյն վերարկուն առաւ առանց Բոսթանսի սիրտը մտածելու, որ դազադին մէջ դրուած կը մտաւ, Յայնժամ, Փիւշի, խորապէս զայրացած, փութացուց յուղարկաւորութեան հանդէպը որ յայտը օրը պիտի բլլար դազադը յանի մը մեռելակիրներու ձեռքը տուաւ, ու թշնառ Բոսթանսի Ելվերի, ձեռքէն վաճառականին եւ քանի մը ազգականներու րնկերակցութեամբ շփայն, յոյժ ու անձայն փոխադրուեցաւ Ս. Մագթաղինէ եկեղեցին, ուր տեղ մը պատրաստուած էր իրեն համար, Նիքոլի իր վերարկուն մէջ փաթկուած, եկեղեցուն գաւթին մէջ կրպակէր: Խիստ զարմացաւ տեսնելով որ յուղարկաւորութեան թափօր մը կուգար եկեղեցի օրուան այդ տարածամիջոցին, եւ հարցուց իր հօրը որ դազադին կը հետեւէր թէ ո՞վ էր հանգուցեալը, Մերուսին աղօթագիրք

քը ձեռքը, առանց զուտը վեր վերը գրելու պարզապէս պատասխանեց, «Բոսթանսի Բոսթանսին», եւ յետոյ առանց կարեւորութիւն տալու Նիքոլի ներկայութեան, դազադին կփարիչը անգամ մըն ալ բացուեցաւ, ներկաները բոլորն ալ իաջակեցին եւ յետոյ գիտեցան իջեցուցին ու փակեցին:

Այս միջոցէպ օր սաստիկ չիտիեցուց Նիքոլի, բուռն ատելութիւն մը յառաջ բերաւ Նիքոլի սրբախին մէջ Ելվերի հանդէպ, որովհետեւ ձեռքներին իրեն բրած այս հրապարակային նախասինքին պատասխանատու զայն կը բռնէր, Բոսթանսի օրեր Փիւշի իր որդեգրին հետ բառ մը իսկ չի փոխանակեց, սակայն Նիքոլի անոր բարեացակամութեան կը կարտուէր Բոսթանսի ժառանգութեանը ձեռք ձգելու համար: Գիշեր մը վերջապէս, ստիպուեցաւ իր հօր ձեռքը համբուրել եւ անոր խոստանալ, արտանց զղջացողի մը կերպարանքով, թէ այդ ժամուն իսկ պիտի ճամէր Բոսթանսին մընտնջեալս, բայց, բնաւ դիտաւորութիւն չունէր իր խոստումը կատարելու: Ընդգլխում թէ իր յամառութիւնը կը սասակացնէր եւ անոր կը

եղաւ կնքել Վրացի իրաւունքն իրաւունքով ճումար շնորհիւ, Արեւմտեցի ներշնչեց յոյս ու ապահովութիւն, սակայն ամենամօտիկ ժամանակի մը մէջ այս ելեմօական տաղանայր դարձեալ է, եւսն դալու է :

Անգլիոյ և Ռուսիոյ միջև կընքուելիք համաձայնութիւնը կախումն ունի այն ապահովութենէն որ ապահով կը պահուի — թէ ուսական քաղաքակրթութիւնը կունենայ հաստատ կռուան մը :

Կարելի չէ նախագուշակութիւններ ընել, առանց գիտնալու թէ ինչ է վերին կառավարութեան և անոր խորհրդակցներուն յայտակարար իրենք այլ չեն գիտեր գուցէ :

Ռուսական կառավարութիւնը զլիւսագիտութիւնը բրած է միմիայն ներքին, իսկ նա երբէք ժամանակի տեղի ունեցած չէ, այլ միշտ շատ ուշ երբ արդէն խաղաղութիւնը անկարելի է դարձած :

Տուճան պէտք է ըմբռնէ որ իր գումարումը նա կը պարտի այն անձերու, որոնցմով հիմայ եւրոպական Ռուսիոյ և Արիւրի բանտերը լի լինցուն են : Իսկ եթէ ուսական վերին իշխանութիւնը և անոր խորհրդատուները հաստատուէն որոշած են տեղի շատ, անոնք աւելի խելացիօրէն վարուած կը լլային, եթէ բնաւ ճուման չը կանչէին : Թանձին ճումարի ուսական ազգը նեցուկ մը դաւաւ : Վերջին անգէրը ճումարի գէպի կառավարութեան տաճած անվստահութիւնը կը դորացնեն, իսկ ճումարի բռնած ընթացքը ուսական ազգը ամբողջովին, անձեանպահ կընդունի :

Վերին իշխանութեան տաճած, որ արի նկատումներու կատարածը, այս հարցին խաղաղապէս վերջանալու մասին, շատ քիչ յոյս կը ներշնչէ :

ՕՐԸ ՕՐԻՆ

Վերջերս հեռագիրները ծանուցին թէ Սպանիոյ Ալֆոնս Ժ. Գ. եւ Նորապսակ էնա Պաղէպէլի լիւսնուհի (հիմա Վիքթորիա, թագուհի Սպանիոյ) հանգէպ անխառնակուն, ներք մահափորձ մը ըրած են, ինչ որ, տեղի կունենար ճիշտ այն ժամանակ, երբ նորապսակ գահակալ կողակիցները կը դառնային եկեղեցիէն :

Հարանեկան թափորը ճամբայ կիրնայ գէպի պալատ, խուռն բազմութեան մը շարքերու միջև, որ «Մայր» փողոցի երկայնքով շարուած էր, ու յանկարծ խուլ մահասարուռ ըմբռնւն մը, թումը մը կը պայթի ճիշտ ու ճիշտ թագաւորական կառքին առջև :

Ռուսը սլուռ, գեղատեսիլ, վարդեայ փունջի մը մէջ պարտուած նոյն փողոցի մէջ գտնուող թիւ 88 տան պատշգամբու մէկէն վար կը նետուի :

Տեղը յարմար, նշանը լաւ առնուած էր, սակայն թագաւորը կը մնայ անձադ, թագուհին շատ շնչին կերպով կը վնասուի իսկ ժողովուրդը կուտայ տասնեակներով զոհերու :

Մահափորձին հեղինակը, եմթարուժով, պատանի մ'է 18 տարեկան, Սպանիացի, Այս պատանին ուսանող մ'է, անիշխանական, նա Լոնտոնի մէջ, անիշխանականներու կողմէն Ալֆոնսի համար արձակուած մահուան դատաւճռին գործադիրն է :

Այս մահափորձը տեղի կունենայ արիւնքական սկզբունքի վրայ հիմնուած, ինչպէս ասկէ առաջ տեղի ունեցած գէպերը : Անիշխանականները թագակալներու մահու վճիռը

կարձակեն, նկատի ունենալով անոնց սղոթի կամ անողակի հասուցած վնասները : Սակայն թագակալները մեղաւկից են իրենց հոգատարութեան յանձնուած կառավարութեան մէջ տեղի ունեցած անարդարութեանց եւ կամ թէ անոնք արժանիք են մահու — այս ուրիշ հարց մ'է :

Սպանիոյ թագաւոր Ալֆոնսը մահուան կը դատաւարուի վճիռը կը գործադրուի, նա չըմենի որ այլ հարիւրաւոր անմեղ անձինք զոհ կերթան, որոնց բարիւտութեան համար անիշխանականները կը գործադրին այդ վճիռը : Ասի կը ցուցադրէ թէ ինչպէս արդի ընկերակառութեան կազմակերպութիւնը աններգաշնակ, այնպէս անիշխանական սկզբունքը վայրենի է — թէ լլլայ ընդունելի մասնակի առած :

Անիշխանականներու սկզբունքով մէն մի թագակալ մեռնելու է, ինչու, բրովնետեւ նա կապրի ուրիշներու ի վնաս, սակայն այսու, վերջապէս նա ալ մարդ մ'է : Թագաւորներն ալ իրենց հասուցած վնասներու եւ գործադրած յանցանքի համար պատասխանատու են եւ այսպէս ալ լլլալու են, երկիրը կառավարող օրէնքներու համաձայն (1) :

Կարլոս Բ., Լուզովիկոս Ժ. Գահճի տապարին զոհ տուին իրենց գրուութիւն, ազգային ներկայացուցիչներ :

(*) Պ. յողուածագիրը շատ հապճեպ վճիռ մը կուտայ անիշխանականութեան մասին : Ընդհակառակը, տեսականօրէն անիշխանականութիւնը շատ աւելի բարձր վարդապետութիւն մըն է, քան ընկերակառութիւնը : Եւ, պէտք է գիտնալ որ, անիշխանականութիւնը թագակալներ սպաննելու մէջ չի կայանար :


Ամէն պարագայի մէջ կը շնորհաւորենք պ. յողուածագիրը իր պուրժուազական փաստաբանութիւններուն համար : Յարգելի պարոն, կը յանձնարարենք ձեզի որ գոնէ կարգաբաւկէ քանի մը տարի առաջ «Շարժում» մէջ ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ խորագրով յողուածներու շարքը : Ծ. Խ.

րու արձակած դատաւճռի մը համաձայն, անոնք մեռան, օրինական կերպով առանց իրենց հետ միասին քարշիւու ուրիշ շատ մը անմեղ գոհեր, ուրիշ է հարցը թէ անոնք որքան յանցապարտ էին եւ ինչ օրինական պատճառներէ կառավարուելով ժամանակին ազգային ներկայացուցչութիւնը արձակեց այդ մահու դատաւճիռը, սակայն ազգը դատեց, վրձոնեց, ուզեց որ ոչնչանան, մեռնին ու մեռան :

Իսկ Պաղուստինի հիմնած անիշխանականութիւնը սկզբունք ըրած է իրեն գործածել ամէն ներքին ու ան ներքին միջոցներ, ու այսպէս ամէն կողմ, ստեղծել ու բերել սփռուի անկարգութիւն, անդեկավարութիւն, անիշխանականութիւն, ոչնչացնելու համար այն ամէնը որուն հասարակաց կարգապահութիւն անունը կուտան... Ետքը, գուցէ իրենք ալ չեն գիտեր : Անիշխանականութիւնը բնածին ձիրքն է արդէն մարդուն, նա իր գործով ու էականութեամբ միշտ կը ձգտի անկախութեան, կապկպող ամէն կապանքէ ազատ լլլալ, ազատ ընուիլ ամէն մէջ, ապրիլ այնպէս ինչպէս կապրի դաշտի վայրի ծաղիկը ու թռչունը, անոր միակ փաղձանքն է : Ընթացիկը ու գեղեցիկը իրենց մէջ ունին այդ ոյժը :

Արդի մարդկային ընկերակառական կազմակերպութիւնը, իր նմաններու ու հայրենիքի հանդէպ պարտականութիւններու կրօնք մ'է ստեղծել, այդ կ'օժի : առաքելութիւններէն ըղիւսած պարտականութիւններու շաղախով յորինել է ճնշիչ օրէնքներ, այդ կրօնը հիմնայտակ փշրել ու օրէնքները շնչել զարկով մը, անհատներու եւ օրուան մը գործ չէ, այլ ապագային դառանցանք միայն կարելի է նկատել :

9.



սորվեցնէր պարկեշտ ձերուներին հըս կողովներէն վրիպելու արեւստը : Միւս կողմէ, երբէք էլ վէրը իր աչքին այնքան գեղեցիկ երեւցած չէր որչափ այն վայրկեանին երբ, ի մեծ գծարխտութիւն իրեն բացած ու գոցած էր Գազալիէտաի նո ժիշտը գրտ նուող սենեակը : Անոր այտերուն վըրայ վառող զայրոյթը, անհուն հրապոյր մը գրոշմած էր իր գործով իր գէպերն վրայ : Նիքօլօի անհաւատալի կը թուէր որ իր այդ քան հրապոյրներովը էլ վէր փորձուած չըլլար մտնելու այն ճամբան ուրիշ քաղուած քանի մը ծաղիկները այնքան զայրոյթ յառաջ բերած էին իր մէջ, ինք ալ առիթը ներկայանալուն կը տենջար փոխվրէժը ուձել այդ կը նոջմէն : Հետզհետէ ատկա իր միակ փափաքը սկսաւ դառնալ եւ անձկութեամբ կը սպասէր պատեհութեան մը որ իր ծրագիրը իրագործէր :

Անգամ մը, Փիւրի տունէն մեկ նստ ըլլալով, Նիքօլօ էլ վէրի սենեակին առջեւէն անցաւ եւ, գարման ըով լսեց թէ խոսակցութեան ձայն մը կար ներքը : Անակնկալ ու պիղծ յոյսերով լեցուած, աչքերն ու ա կանջները լարելով, գէպի գրան փականքը հակեցաւ, եւ, ո'վ զարմա

նալիք, ինչ տեսնէր ազէկ : Էլ վէր, սիրականի մը ոտքերը ինկած, յափշտակուած վիճակի մէջ մնացեր էր : Ու թէ եւ չը կրցաւ մարդուն գիմագիծը լաւ մը որոշել : Բայց որոշակի լսեց գէթ զած ձայնով եւ սիրալիր շնչով մը յեղեղող սա անունը : «Պոլինո» : Սրտատրոփ, գնաց նըր բանցքին պատուհանին առջև սպասեց, ուրիշ կընար զիտել սենեակին դուռը : Յետոյ, փակած քին թեթեւ մէկ ազնուկը լսելով վայրկեանը հասած կարծեց, անգին վայրկեանը ուր պիտի յաղողէր սուտ սրբուհին գիմակաթափ ընելու : Բայց իր կարծած անձանքին տեղ, էլ վէր ինքն էր որ դուռը բլաւ : Բացարձակօրէն միանակ, հեռուէն անոր անտարբեր ու հանդարտ ակնարկ մը միայն նետելով : Անութիւն տակ իր ձեռքերով հիսուած կտաւ մը կար, եւ սենեակին դուռը իր մէջքէն կախուած բանալով մը կը պիտի ետքը, հանդարտօրէն սանդուխէն վար իջաւ, ձեռքին մէկը յենարանին կրթնեցնելով : Այս կեղծուածը, այս առերեւոյթ հանդարտութիւնը Նիքօլօն ընդունեց իբր լրում անպարզութեան եւ ներգամբտութեան : Հագիւ թէ էլ վէր աչքին առջեւէն աներեւութացած էր, գնաց

մայր բանալի մը փնտռելու եւ վայրագ ակնարկներով իր շուրջը լաւ մը քննելէ ետքը, գաղտագողի սենեակին դուռը բացաւ : Որքան մեծ եղաւ իր կարմանքը, երբ սենեակը բացարձակօրէն պարապ գտաւ, եւ հակառակ չորս անկիւններն ալ մանրակրկիտ քննութեան մը անցնելուն մարդու հետքի նմանող եւ ոչ իսկ բանի մը հանդիպեցաւ : Եւ սակայն, բնական մեծութեամբ կենդանագիր մը կար հոն երիտասարդ ասպետի մը որ գրուած էր պատին մէկ փոսացած մասին մէջ, կարմիր մետաքսէ վարագոյրի մը ետին, եւ կը փայլէր, արտակարգ լոյսով մը : Նիքօլօ սարսափեցաւ, առանց պատճառը գիտնալու : Հագարու մէկ զգացումներ կուրծքին տակ կը թաւալէին կենդանագրին խոշոր աչքերուն տակ, որ անգոյթ գինքը կը զիտէր կարծես : Բայց, զեռ ինքզինքը չանփոփած ու գաղտփարները չորոշած, յանկարծակի բռնուելու եւ էլ վէրէն պատճուելու վախը եկաւ վրան : Դուռը վերստին զոցեց, սաստիկ յուզուած, ու կծիկը դրաւ :

Որքան կանդորդառնար այս տարրորինակ գէպերն, այնքան իր տեսած պատկերը կարեւորութիւն կըս :

տանար իր աչքին առջև : Եւ այդ կենդանագրին ո'վ ըլլալը գիտնալու իղձը համեմատականօրէն կուեղցնէր իր խանդն ու անձկութիւնը : Ինք աչքերով տեսած է էլ վէրի ծնրագրելու, եւ կը կասկածէր որ կենդանագրին ներկայացուցած անձը ըլլար այն որուն առջև ծնրագրած էր Հոգուոյն մէջ տիրող այս յուզման ազգեցութիւն տակ, գնաց Գազալիէտա թաւթիկի տունը և անոր պատմեց այս եզակի գէպը : Այդ հոմանին հաճութեամբ ընդունեց էլ վէրի գէմ դաւաղելու ծրագիրը, քանի որ իրենց յարաբերութիւններուն մէջ հանդիպած բոլոր արգելքները անոր կողմէ կը յարուցուէին : Ուստի փափաք յայտնեց այդ կենդանագիրը տեսնելու : Ստուգիւ, Գազալիէտա կընար պարծենալ իտալացի պոետականները ամբողջութեամբ ճանչնալուն : Եթէ յիշեալը գոնէ անգամ մը Հոռոմ եկած էր եւ քիչ շատ կարեւոր անձ մը կը ներկայացնէր, անպատճառ կը յուսար ճանչնալ :

(Շարունակելի)

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՍՊԱՆՆԵՑԻՆ
ՄՊՐԻՍԱ ՍՊԻՐԻՏՈՆՕՎԱՅԻ
ԲՈՒՆԱՐԱՐԻՉԸ

«Ազատ Ինքնի ընթացողներ»
բուն արգէն յայտնի են այն գա-
ղանային տանջանքները, զորս
խաղախներու սպայ Ապրամով
պատճառած էր Մարիա Սպիրի-
տոնովային: Ապրամով դատական
իշխանութեան կողմէ ոչ միայն
չպատճառեցաւ, այլ և գուցէ ա-
ւելի բարձրաճակատ, աւելի յաղ-
թական՝ իր պաշտօնին մէջ մնաց
անպատիժ: Մինչդեռ Մարիային,
Ռուս Վերանորոգութեան այդ նոր
սրբուհուն, վիճակուեցաւ նախ
կախազանի, ապա տաժանակիր
աշխատութեան, և աւելի ուշ՝
բանտային խորշի մը ծանր տա-
ռապանքը, ուր բռնաբարուած
կոյսը, ամօթը ճակտին, մահու և
կեանքի մէջ տարուբերող հոգե-
վարք մը կ'անցընէ այսօր:

Վերջին դրութեան բոցը՝ սա-
կայն՝ Մարիայի ընկերներուն
սիրտը կը լափէր, ամէն անգամ
որ կը տեսնէին հրէշ Ապրամովի
մը ազատ և աւելի զուարթ մտաք
ու ելքը ընկերութեան մէջ, ա-
նոր շառաչող սուրբ մայրերուն
վրայ և զինուորականի հ. մ. բ. խ
խորխոր քալուածքը կը խոցոտէր
անշուշտ Մարիայի ընկերներուն
արիւնտաճ սիրտը: Գաղտնի
ձեռքեր անոր կեանքին թելերը
կտրտելու ցանցերը կը պատրաս-
տէին:

Ապրամով Զատկական տօնե-
րուն՝ խրախճանքի գացած էր
իր ծննդավայրը՝ Բորիսգլիբսքո:
Ան՝ իր առաջին կինը թողած էր
արդէն և հիմա կը հետապնդէր
իր նոր գտած հարսնացուի մեղ-
րալուսնին: ու զարմանալի էր
որ Ռուսաստանի մէջ գեռ զըտ
նուած էր օրիորդ մը, որ յանձն
էր առած իր անմեղ ձեռքը կցել
Ապրամովի մը ձեռքին հետ: ո-
րուն վրայէն գեռ եղեռնագործի
մը յատուկ կուսասպանութեան
արեան բիծերը չէին չորցած ու
երբ մամուլը իր գարշանքի թու-
քը նետած էր ռուսական չինով-
նիկութեան ներկայացուցիչ այդ
գաղանի անամօթ ճակտին:

Ճիշդ Զատկուան գիշերը Ապ-
րամով իր հարսնացուին տունն էր
իբր հիւր, մինչդեռ շարագու-
չակ ամպեր անդին շանթեր կը
գարրնէին: Մասկուայի հիւան-
դանոցէն գեռ նոր ելած, Ապ-
րամովի ախոյժակն ու սրամադ-
րութիւնները սրուած էին. պար
պուած բաժակներ նոյն իսկ անոր
երգելու ախորժակը գրգռած է
ին. անոր հնչուն ու հարուստ
ձայնէն զինովցած պշտուհին շէր
գիտեր թէ անոր այդ ուրուներ-
գէջքը վերջինն էին, և շուտով
անոնց պիտի յաջորդէին թաղ-
մանական երգերը:

Երգը վերջացաւ. հիւրերը
ցրուեցան. նոր հարսնացու խոս-
տանքից մպիտով մը «չուտով ի
տեսութիւն» մը մնչեց գնելով իր
փափուկ ձեռքը Ապրամովի մը
ազտութեան մէջ: Ապրամով
հեռացաւ. գուռը փակուեցաւ ա-
նոր ետեւէն. հազիւ քանի մը
քայլ անդին մարդկային ստուեր
մը հրէրաց յանկարձ գէպի Ապ-
րամովի սահմակած քայլերը:
Պատահական ըլլալով երեք ան-
գամ թաւալեցաւ իր վրայ, ու
երեք գծոյնային գնդակներ գա-
մեց անոր փորին ու ձեռքերուն
մէջ: Ապրամով յառաջեց ու ին
կաւ. վայրկենապէս ոստիկան
ները հասան, և անոնց սուր սու-
լիչներու ձայնին կողմը վազե-
ցին գիշերապահները. բայց
այնտեղ ոչ ոք մնացած էր, բա-
ցի իր արիւնին մէջ խրխուացող
Ապրամովը: Ան գեռ գիտակցու-
թիւնը չէր կորսնցուցած. երբ
անոր հարցուցին թէ՛ արդեօք
չի՞ յիշեր իր «թէնոս»ը, կամ
զո՞վ կենթադրէ, ան պատասխա-
նեց թէ ինքը այդ մասին ոչինչ
չի գիտեր:

Մէկ ժամ վերջը մեռած էր:
Ա.ՉԱՍ ԲԵՄ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ի Բ Ի Ս

Ենթանէն հասած լուրերը կը
հաւաստեն թէ՛ կացութիւնը կը
մնայ նոյն, միայն Պէտուին—վա-
հապիղները մեծ պատրաստու-
թիւն կը տեսնեն:

Մարշալ Ֆելչի փաշան անդա-
դար զօրք կուզէ, սակայն զօրքը
չհասնիր:

Ընդհակառակը նէտճէն կիմա-
ցնեն թէ՛ Պատրարի և Գառնի
նահանգներու սահմանագծին
վրայ ամէն օր բաւականի լուրջ
ընդհարումներ տեղի կուծնան
թուրք զինուորներու և ըմբոս-
տացած վաշակատու ցեղերու մի-
ջեւ, այս վերջիններս ամբողջ
դաշտավայրը գրաւած են. Պոլ-
սոյ զինուորական նախարարու-
թիւնը այդ կողմերը զօրք ուղար-
կելու համար հրահանգներ փո-
խանցած է. կենթադրուի թէ
այս արապական շարժումը, միւ-
սիւմա՛ն ալանդներու գործը ըլ-
լայ, որոնք նոր խալիֆայութեան
մը հաստատման համար կը ճրգ-
նին և կը գործեն եգիպտոսի:
Սիւրիոյ ու Արապիոյ մէջ, իսկ
այս կասկածը շատ կը վրդովէ Բ.
Դուռը:

— Եպարքոսը, Ֆէլիտ փաշան,
գաղտնապէս կը հակառակի նո-
րակնքուելիք փոխառութեան:
Եպարքոսը կը կարծէ թէ այս
չրջումը զանձարանին համար
անտանելի պիտի դառնայ, սա-
կայն դրամական տագնապը այն
քան զգալի է որ, կը կարծեն

թէ՛ այս ելեմտական հարցը քիչ
օրէն պիտի յարգարո ի. թըր-
քական հասարակաց պարտուեց
հաստատութեան առաջագրած
պայմաններով:

— Մոֆիտի իրքական գոր-
ծակատար Սատըք փաշան Պոլիս
մեկնած է:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

«Վոյնչէ Յայթուկ» լրագիրը
Բեթերայուրկէն կրճատայ թէ՛
Սահմանագրա-Ռամկավարական
ներու միջև բաժանում մը եղեր
է, կուսակցութեան աջակողմեան.
ները, որուն գլուխը անցած է
կոմս Հայտընը, կառավարէ Ե-
ղբր շափաւորեալ բաժանում մը
կազմակերպել, որուն պիտի մաս-
նակցին եղբր հարիւրի մը շափ-
երեսփոխանները Այս բաժանումի
պիտի միանան և Ռոլնիացիները:
Կառավարութիւնը տրամադրի
է եղբր Բոլնիացիներուն մեծ
զիջումներ ընել:

Հրէաներու դէմ եղած հակա-
կրութիւնը դարձեալ կը զօրա-
նայ: Սովի պատճառով եղած
անկարգութիւններու և զիւղա-
կան շարժումներու մասին հասած
լուրերը շափազանցուած են, մի-
այն նպատակ ունին եղբր Տուժի
վերայ աւելի ազդեցութիւն ներ-
գործել:

— Կոստատրոզվէննա Տուժի
մէջ շափաւորեալ կուսակցութիւն
մը կազմակերպուած է, որ նպա-
տակ ունի երկրագործական ար-
մատականութեան, Սահմանագ-
րա Ռամկավարութեան, և զիւ-
ղական կուսակցութեան հակա-
ռակի:

— Նախարարական խորհուրդը
երկու հակառակ կուսակցութեան
բաժնուած է. մէկուն գլուխը կը
գտնուի նախարար պետ կորէմի.
քինը, իսկ միւսին մէջ են Կա-
ուիֆման, Շտէկլովիդով. Սոյուի-
բին: Իզվոլսքին այս երկու բա-
ժանումներէն և ոչ մէկուն կը
մասնակցի երկրորդ բաժանումը,
կը պնդէ թէ՛ նախարարութեան
Տուժի մէջ ըրած առաջին փոր-
ձէն յետոյ՝ հրաժարիլը անհրա-
ժեշտ է, որով կարելի ըլլայ Տու-
ժի հետ յարաբերութիւնները
բարելուել, և նորակազմուելիք
նորադրութեան կարելի ըլլայ
օգուտ քաղել ներկայ նախարա-
րութեան Տուժի հետ ունեցած
յարաբերութեան, ու այսպէս կա-
ռավարութեան ազդեցութիւնը
բարձրացնել: Առաջին համա-
խըմբումը կը պահանջէ որ նա-
խարարական խորհուրդը Տուժան
ընաւ չճանչնայ. պետական խոր-
հուրդի մեծամասնութիւնը առջի
համախըմբումի կուսակց է, թէև
նա համաժողով չէ այն սուր ոճին
հետ, որով Տուժան գիմաւորեց
կառավարութեան ծրագիրը. սա-
կայն ամէն պարագայի մէջ հա-
մարտ է Տուժի նախարարու-
թեան դէմ արտայայտած անվրա-
տահութեան, և համոզուած է թէ՛

հրաժարական տալէ զտ ուր/չ
ճար չիսյ:

— Ռուսական յեղափոխական
լուսակցութիւնը յայտարարու-
թիւն մը՝ հրապարակած է, որով
կիմացիէ ամէն տեսակ ահաբեկ-
չական գործառնութեան ձեռն-
պահ մնալը, մինչև Տուժի գոր-
ծերու արդիւնք սէսնելը:

— «Բէլչ» անուն լրագիրը կը
հարգող թէ՛ արդարագատու-
թեան նախարարի առաջարկու-
թեան համաձայն, նախարարա-
կան խորհուրդը մահուան պա-
սիժը պիտի ջնջէ:

— Օտեսայի մէջ սարսափիկ
փոթորիկ մը եղեր, տեղափոխու-
ած արեւով միասին:

— Խալիբը ջուր կորուց, շատ մը
տուներու գետնահարթ բաժա-
նումներու մէջ զժրազուցութիւն-
ներ պատահեր, Երեք հոգի խեղ-
ղուած կայ: Քանի մը անգամ
կայծակ ինկաւ և քանի մը տու-
ներու պատերը հիմնայատակ ը-
րաւ: Ազդարտիկ դասակարգը, որ
նաւահանգութի թագերու գետ-
նահարկ տուններու մէջ կը բնա-
կի, իր բոլոր գոյքը կորուսեր է:

— Պետական խորհուրդի փոխ
նախագահը, Ֆրիշ, այս հաստա-
տութեան նախագահը անուան-
ուած է:

— Ռուսական երկրի ամէն
կողմէն, Տուժի երեսփոխաննե-
րուն հեռագիրներ կուղղեն. որով
կը խորխուսեն զանոնք իրենց
պահանջներու վրայ պնդել:

Ս Պ Ա Ն Ի Ա

Մաթէօ Մօրալէս. Ապանիոյ
թագաւորին դէմ եղած մահա-
փ: ձր հեղինակը, Մօրալի մօ-
տակայքը գտնուող Թուրքօ գիւ-
ղին մէջ ձերբակալու երէ: Երբ
ուտիկանը զանի կառավարողէր
թագապետութիւնը, Մաթէօ Մօ-
րալէս զրպանէն կը հանէ վեց-
հարուածեան մը, և կրակ կընէ
ոստիկանին դէմ, այս վերջինս
հոգեւապառ կը թաւալի գետին,
իսկ անկէ ետքը տեսնելով թէ
ազատում չկայ անձնապան կըլ-
լայ: Դիակը Մատրիտ փոխադ-
րուած է հաստատելու համար
իսկութիւնը Սպանուած ոստի-
կանին այրին գաւազորող ձեր-
բակալողին խոստացուած 25,000
բէզլագ պարգեւը պիտի ստա-
նայ:

— Սպանիոյ թագաւոր Ալֆոնսի
հարսնական հանդէսին ներկայ
պտնուելու համար ստոր պետու-
թեանց ուղարկած պատուիրակ-
ները, արտաքին գործոց նախա-
րարութեան մէջ իրենց հրաժեշ-
տի ողջոյնը մատուցին:

— Մահափորձի պահուն, ռուս-
րի կտորներէն թեթեւապէս վի-
րաւորուած երկու զինուորները
մեռեր են: «Սի ենթադրել կու-
սայ թէ՛ ռուսը թունալից է,
տյալպէս զինուոր ներու ստացած
վերքերը մահացու չէին: